

**ՏԵՂԵԿԱՆՔ****Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ****Իրավական ակտի նախագծի անվանում**

Կերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

**Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում**

Էկոնոմիկայի նախարարություն

**Իրավական ակտի տեսակ**

Օրենք

**Ոլորտ**

Գյուղատնտեսություն, Էկոնոմիկա

**Հանրային քննարկման ժամկետ**

25/10/2019 - 11/11/2019

**Ստացված առաջարկների արդյունքներ**

Ստացվել է 1 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 1 առաջարկ

**Քվեարկության արդյունքներ**

12 կողմ

1 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է [www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքի կողմից**

12/11/2019

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

### ԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/ h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Արմեն Վարդանյան 29.10.2019 11:54:17	<<Կերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծն անընդունելի է, իրատեսական չէ և չի լուծում իր առջև դրված խնդիրը, հաշվի չեն առնվել հետևանքները. Չի կարող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը ուժը կորցրած ճանաչվել կամ էլ 30-րդ կետը շարադրվել նոր խմբագրությամբ, որովհետև դրա հետևանքով վերանում է	Ձեր առաջարկությունները կքննարկվեն աշխատանքային կարգով:	

		<p>կենդանիներին բուժման կամ խաթարված ֆունկցիաների վերականգնման համար աշխարհում վաղուց ընդունված և կիրառվող դեղային կերի օգտագործման հնարավորությունը: Դեղային կերը կարող է պարունակել ոչ միայն հակաբիոտիկ, այլև այս կամ այն հիվանդության բուժման, վարակների տարածման և վերացման կամ օրգանիզմի խաթարված ֆունկցիաների վերականգնման համար նախատեսված դեղաբանական այլ տեսակի ազդեցության և նպատակի ծառայող նյութ կամ ակտիվ հիմք, որը կարող է լինել ոչ միայն սինթեզված, այլև բնական, օրինակ՝ բուսական, կենսաբանական, մանրէաբանական հիմքով և այլն, որը անասնաբուժությունում և ժամանակակից արտադրական հսկայական ծավալների թռչնաբուծության կամ անասնապահության պայմաններում ուղղակի անփոխարինելի պրակտիկ նշանակություն ունի, քանի որ կենդանիներին և թռչուններին դրանք տրվում են բերանային եղանակով՝ կերի կամ ջրի միջոցով, ընդորում, հաշվի առնել, որ լինում են դեպքեր, երբ հարկադրված են կերային ճանապարհով տրվում, երբ այլ եղանակներով կենդանու օրգանիզմ այս կամ այն նյութի կամ</p>	
--	--	---	--



		<p>պատրաստուկի ներմուծումը հնարավոր կամ արդարացված չէ: Նախագծով նման մոտեցումը հանգեցնում է նրան, որ վերանում է ոչ միայն մթերատու կենդանիների՝ կենդանական ծագման մթերքի ստացման համար պահվող, այլև ձկների, մեղունների, տնային, դեկորատիվ, վայրի կենդանիների և թռչունների համար բերանային եղանակով կերի միջոցով այս կամ այն հիվանդության բուժման կամ կանխարգելման կամ խաթարված ֆիզիոլոգիական ֆունկցիայի վերականգնման հնարավորությունը: Այդ հնարավորությունը սահմանափակվում կամ վերանում է ոչ միայն հակաբիոտիկներով, այլև հակաբիոտիկներ չհանդիսացող բազմաթիվ այլ տեսակի, իսկ իրականում բոլոր տեսակի դեղաբանական ազդող նյութերով, օրինակ՝ կերի միջոցով հակապարագիտային ազդեցության նյութերով, կենդանիների յուրահատուկ և ոչ յուրահատուկ իմունականխարգելիչ միջոցներով և այլն: Պետք է հաշվի առնել, որ նման մոտեցումը չի գործելու և հնարավոր չէ այս մոտեցմամբ լուծել խնդիրը՝ կանոնակարգել հակաբիոտիկների օգտագործումը հիվանդությունների բուժման կամ</p>		
--	--	--	--	--

		<p>կանխարգելման կամ աճի խթանման նպատակով, իսկ իրականում նախագծով փաստացի փորձ է արվում կանխել հակաբիոտիկների արգելման արդարացումով բոլոր տեսակի կենդանիների համար բոլոր տեսակի դեղային կերերի օգտագործումը: Այլ երկրներում արդյունաբերական ծավալներով արտադրության և օգտագործման համար թույլատրված նման կերերը միանշանակ մտնելու են տեղական շուկա, որտեղ անսահմանափակ և առանց սահմանային հսկողության շրջանառվում են նաև ԵԱՏՄ անդամ երկրների համապատասխան արտադրանքները: Ի վերջո, տրամաբանակն չէ նման մոտեցումը, որովհետև թոչնաբուծական կան անասնապահական համալիրները /չհաշված անասնատերերի և գյուղացիական տնտեսությունները/ կարող են ինքնուրույն հարցը լուծել՝ որոշակի կերի տեսակներին ավելացնելով այս կամ այն խնդրի լուծումն ապահովող դեղաբանական ազդող նյութը հեղուկ կամ փոշի վիճակում, մի՞թե հակաբիոտիկների կամ այլ դեղաբանական ազդող նյութերի հումքի և պատրաստի արտադրանքի ներմուծումը կամ օգտագործումը կամ արտադրությունն էլ պետք</p>		
--	--	--	--	--

		<p>է կամ հնարավոր է արգելել, իհարկե՝ ոչ:</p> <p>Համաշխարհային պրակտիկայում ընդունված է և գործում է դեղային կերն ու դրա արտադրության և շրջանառության պրակտիկան, որին զուգահեռ արդիական է նաև հակաբիոտիկների օգտագործման սահմանափակումը կամ արգելքը՝ հակամիկրոբային ռեզիստենտության դեմ պայքարի նպատակով, ինչը չի նշանակում, որ պետք է առհասարակ բացառել կենդանիներին, այդ թվում՝ մթերատու, կերային ճանապարհով այս կամ այն դեղաբանական նյութի օգտագործումը, որը ցուցված է բազմաթիվ հիմքերով, պատճառներով և նպատակներով: Դրա համար սահմանված են արգելված նյութերի ցանկեր կամ կենդանիներից ստացված մթերքում կամ սննդամթերքում որոշակի նյութերի, այդ թվում՝ դեղաբանական ազդեցության, մնացորդային առավելագույն քանակների սահմանաչափեր, գոյություն ունի անասնաբուժական դեղամիջոցի դադարեցման ժամանակահատված կամ կենդանիների բազմացման, կտղուցը կարգավորելու, սերմնավորման, բեղմնավորման, սաղմերի փոխպատվաստման և այլ զոոտեխնիկական</p>		
--	--	---	--	--

		<p>նպատակներով դեղային նյութերի կամ պատրաստուկների կիրառման պրակտիկա՝ ամրագրված նաև ՀՀ անասնաբուժական օրենսդրությամբ, ինչը նշանակում է, որ հարցի լուծումը ոչ թե &lt;&lt;Կերի մասին&gt;&gt; ՀՀ օրենքում փոփոխությունն է, այլև տրամաբանական և պատշաճ հսկողության, վերահսկողության մեխանիզմների ներդրումն ու կիրառումը, օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների կամ արգելքների, այդ թվում՝ հակաբիոտիկների օգտագործման մասով, դեպքերի բացահայտումը և կանխումը:</p>		
--	--	---	--	--